ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անալիտիկ» ՓԲԸ 2020թ. տարեկան

ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ որոշման)

ք. Երևան 29 **հունիսի 2021թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ս. Պապիկյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
Հ. Բատիկյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար
Ա.Վարդանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ
Ա. Մանուկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ
Ա. Ավագյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան, (ժողովի քարտուղար)
Ս.Սարգսյան	«Անալիտիկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Ժողովի նախագահ՝ Ս. Պապիկյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2020 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. վերստուգողի /աուդիտի/ եզրակացության ներկայացում:
3. 2020 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. 2020 թվականի տարեկան շահույթի (վնասի) հաշվի հաստատում:
5. 2020 թվականի տարեկան շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց ընկերության 2020թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը (կցվում է):

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Լսվեց ընկերության վերստուգողի (աուդիտի) եզրակացությունը (կցվում է):

Ներկայացնող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի եզրակացությունը, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել «Անալիտիկ» ՓԲԸ 2020թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց ընկերության 2020թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը (կցվում է):

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի եզրակացությունը, հաստատել ընկերության 2020թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց ընկերության 2020թ. շահույթի հաշվի հաստատման հարցը (տեղեկանքը կցվում է):

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել ընկերության 2020թ. տարեկան զուտ շահույթը շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 2697,0 հազ. դրամ և զուտ շահույթը հաշվի առած ավելացումները (շահութաբաժնի հաշվարկի 060 տող) 3694,0 հազ. դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեցին ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը (առաջարկությունը կցվում է):

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել ընկերության 2020թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի /հաշվի առած ավելացումները/ 50 %-ը՝ 1847,0 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 135,0հազ. դրամը հատկացնել ընկերության պահուստային հիմնադրամին.

զուտ շահույթի մնացած մասը՝ 715,0 հազ. դրամը (2697-1847-135) թողնել որպես չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՊԱՊԻԿՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ԱՎԱԳՅԱՆ**